ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*22 փետրվարի 2021թ.* *N 04*

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման Մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել համայնքի ավագանու թիվ 2 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| | **Կողմ ( )** | **Դեմ ( )** | **Ձեռնպահ ( )** |
|---|---|---|---|
| *Վ.Խաչատրյան* | | | |
| *Հ. Դավթյան* | | | |
| *Մ. Մուրադյան* | | | |
| *Մն. Մուրադյան* | | | |

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*2021 թվականի փետրվարի 22*
*գ.Գետաշեն Ժամը 14⁰⁰*

Հավելված
Գետաշեն համայնքի ավագանու
22.02. 2021թ. նիստի N04 որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

4. Ավագանու N 2 նիստի օրակարգի հաստատելու մասին (Զեկ. աշխատակազմի քարտուղար Ավետիսյան Ե.):

5 Ն. Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու 2021 թ. հունվարի 11-ի N03-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկ. աշխատակազմի առաջատար մասնագետ Թադևոսյան Ս.):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Գետաշեն համայնք, Հրապարակ 1,
Հեռախոս 093 16 94 64
getashen.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» փետրվարի 2021 թվական N 05 Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և 13-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հիմք ընդունելով ՀՀ արդարադատության նախարարության 12.02.2021թ. N /27.3/3234-2021 փորձագիտական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու 2021 թ. հունվարի 11-ի « Գետաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 03-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

*1) Հաստատել տարեսկզբի ազատ մնացորդը.*

*ա. Վարչական մաս՝ 1,279,353 (մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունինը հազար երեք հարյուր հիսուներեք դրամ),*

*բ. Ֆոնդային մաս՝ 11,625,110.4 (տասնմեկ միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար մեկ հարյուր տաս դրամ քառասուն լումա),*

*2) Ծախսային մասը փոփոխել հետևյալ կերպ՝*

*ա. վարչական բյուջեի մնացորդը ուղղել՝ նախորդ տարվա պարտքերի մարմանը*

*14-01-01-1 նախահաշվի*

*4212 հոդվածին՝ 355,342* (երեք հարյուր հիսունհինգ հազար երեք հարյուր քառասուներկու) դր.

4214 հոդվածին՝ 6,000 (վեց հազար) դր.

4823 հոդվածին՝ 47,000 (քառասունյոթ հազար) դր.

*14-06-03-1 նախահաշվի*

*4212 հոդվածին՝ 871,011* (ութ հարյուր յոթանասունմեկ հազար տասնմեկ) դր.

*բ. Ֆոնդային բյուջեի մնացորդը ուղղել՝*

01-01-1 նախահաշվի

5113 հոդվածին՝ 4,600,000 (չորս միլիոն վեց հարյուր հազար) դր.

5122 հոդվածին՝ 980,000 (ինը հարյուր ութսուն հազար) դր.

01-06-1 նախահաշվի

5122 հոդվածին՝ 200,000 (երկու հարյուր հազար) դր.

04-03-2 նախահաշվի

5112 հոդվածին՝ 4,900,000 (չորս միլիոն ինը հարյուր հազար) դր.

5134 հոդվածին՝ 400,000 (չորս հարյուր հազար) դր.

08-02-3 նախահաշվի

5113 հոդվածին՝ 545,110,4 (հինգ հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր տաս դրամ քառասուն լումա)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ ( ) Դեմ ( ) Ձեռնպահ ( )

ավագանու անդամներ՝

Վ. Խաչատրյան

Մն. Մուրադյան

Հ. Դավթյան

Մ. Մուրադյան

Համայնքի ղեկավար՝ Հովհաննիսյան Գ.

2021 թվականի փետրվարի 22

գ. Գետաշեն

ժամը 15 $^{30}$

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015
Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N /27.3/3234-2021

«12» փետրվար 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Ի պատասխան Ձեր 2021 թվականի փետրվարի 02-ի թիվ 018 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 11-ի N 03-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

2/12/2021

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Արևշատյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594130

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 11-ի N 03-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 11-ի N 03-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) «ՆԱԽԱԳԻԾ» բառն անհրաժեշտ է լրացնել վերևի աջ անկյունում:

2. Նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջները՝ Նախագծի վերնագրից առաջ անհրաժեշտ է լրացնել «Որոշում» բառը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝**

2/12/2021

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

**ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ**